ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 01/61-3409

«21» 02 2020

«ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Կ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ
ք. Երևան, Ս. Զորավարի փ. 46շ.բն.5

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև.

10.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 30.10.2019 թվականը և օրենքի շրջանակում այն երկարաձգվել էր 30 օրով:

10.07.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 30.10.2019 թվականը և օրենքի շրջանակում այն երկարաձգվել էր 30 օրով:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի թվով երեք բակերի հիմնանորոգման մասով՝ 17970000 /տասնյոթ միլիոն իննը հարյուր յոթանասուն հազար/ դրամի փոխարեն կատարվել է 5530426 /հինգ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար չորս հարյուր քսանվեց/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 12439574 /տասներկու միլիոն չորս հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, ընդ որում.

ա. Դավթյան 27 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 4950000 /չորս միլիոն իննը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 2463048 /երկու միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար քառասուութ/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 2486952 /երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար իննը հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ:

բ. Զարյան 17 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6510000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ դրամի փոխարեն կատարվել է 3067378 /երեք միլիոն

վաթսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունութ/ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 3442622 /երեք միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ:

գ/ Զարյան 19 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6510000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ արժեքով աշխատանքները ընդհանրապես չեն կատարվել:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան փողոցի թիվ 26-34 շենքերի համատեղ բակի հիմնանորոգման մասով՝ 8880000 /ութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 4372547 /չորս միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չեն կատարվել 4507453 /չորս միլիոն հինգ հարյուր յոթ հազար չորս հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129